Bundesamt
für Migration
und Flüchtlinge

Ստացեք խորհրդատվություն մեզնից

Խորհրդատվական ծառայություններ տարաբնակեցվածների համար

ARMENISCH

Integration

JUGEND MIGRATIONS DIENSTE

MBE
Migrationsberatung
für erwachsene Zuwanderer

Օգտվեք տարաբնակեցվածների համար առաջարկվող անվճար անհատական խորհրդատվական ծառայություններից.

Մեծահասակ ներգաղթյալների խորհրդատվական կենտրոնում (MBE) և Երիտասարդական միգրացիոն ծառայությունում (JMD)

Անհատական խորհրդատվությունն օգնում է

Սկզբում Գերմանիայում շատ բան կարող է ձեզ տարօրինակ և անծանոթ թվալ: Նույնիսկ եթե վաղուց եք ապրում Գերմանիայում, ձեզ մոտ կարող են առաջանալ հարցեր, որոնց պատասխանները չեք կարողանա գտնել:

Անհատական խորհրդատվությունը և աջակցությունը կօգնեն ձեզ հենց սկզբից: Ձեզ առաջարկվում է կոնկրետ օգնություն առօրյա կյանքի գրեթե ցանկացած իրավիճակի համար: Դուք կարող եք սովորել ինքնուրույն որոշել ձեր գործերը և ընդունել համապատասխան որոշումներ:

Խորհրդատվական ծառայություններ դեռահաս և մեծահասակ տարաբնակեցվածների համար

Մեծահասակների համար նախատեսված միգրացիային վերաբերող խորհրդատվությունները տրամադրում են տեղեկատվություն և օգնություն են ցուցաբերում 27 տարեկանից բարձր տարիքի մեծահասակ ներգաղթյալներին:

Երիտասարդական միգրացիոն ծառայությունները խորհրդատվություն են տրամադրում և օգնում են ներգաղթյալի անցյալ ունեցող 12-ից 27 տարեկան երիտասարդներին:

Սկզբունքորեն ներգաղթի հարցերով կարող եք դիմել ինչպես մեծահասակ ներգաղթյալների խորհրդատվական կենտրոնին, այնպես էլ՝ Երիտասարդական միգրացիոն ծառայություններին: Ձեր առաջին հանդիպումից հետո հետագա գործընթացը կհամաձայնեցվի խորհրդատվություն տրամադրող հաստատությունների հետ: Ընդ որում հաշվի կառնվի ձեր անձնական կյանքի իրավիճակը և ձեր ընտանիքի անդամների վիճակը:

Ավելի լայն հնարավորություններ անհատական խորհրդատվության շնորհիվ

Խորհրդատվական կենտրոնների աշխատակիցները սովորաբար հասկանում են ձեր երկրի լեզուն: Նրանք նաև հասկանում են ձեզ հարազատ սոցիալական, մշակութային և կրոնական մտածելակերպը և վարքը: Ձեզ հետ միասին նրանք մշակում են ծրագիր, որը կօգնի ձեզ կողմնորոշվել Գերմանիայում կյանքի առաջին փուլում: Խորհրդատվության ընթացքում հիմնական ուշադրությունը դարձվում է ձեր անձնական հմտություններին և գիտելիքներին: Դուք կիմանաք, թե ինչ օգնություն կարող եք ստանալ Գերմանիայում ինտեգրումը հեշտացնելու համար:

Խորհրդատվության շրջանակում կարող եք քննարկել առօրյա կյանքի բոլոր հարցերը, օրինակ՝

- Գերմանիայում օրինական կացության իրավաբանական ասպեկտները,
- գերմաներենի ուսուցումը (օրինակ՝ ներգաղթյալների համար նախատեսված դասընթացներում),
- դպրոցական կրթությունը, մասնագիտական պատրաստումը (օրինակ՝ դպրոցական կրթության համակարգ, մասնագիտական կրթության հնարավորություններ, մասնագիտական որակավորման ճանաչում),
- մասնագիտական գործունեությունը (օրինակ՝ ուսուցում հայցորդի համար, աշխատանքի որոնում),
- տնտեսական իրավիճակը (օրինակ՝ եկամուտ, վարկեր, պարտքեր),
- կացությունը (օրինակ՝ բնակարանի որոնում, բնակարանի ֆինանսավորում),
- առողջության հետ կապված հարցեր (օրինակ՝ բժշկական ապահովագրություն, բուժսպասարկում),
- սեփական առողջության վիճակը (օրինակ՝ առողջական խնդիրներ),
- ամուսնություն, ընտանիք և դաստիարակություն (օրինակ՝ հղիություն),
- Տեղափոխությունների և տրանսպորտի հետ կապված հարցերը (օրինակ՝ վարորդական իրավունք, հասարակական տրանսպորտ),
- հանգիստ, սպորտ և ժամանց (օրինակ՝ զբոսաշրջային ծառայությունների վերլուծություն, անդամություն ակումբներում),
- առօրյա զբաղմունքներ (օրինակ՝ գնումներ, հաղորդակցում պետական հաստատությունների հետ):

Երիտասարդական միգրացիոն ծառայությունների հատուկ առաջարկներ ներգաղթյալի անցյալ ունեցող երիտասարդների համար

Օտար երկրում գտնվելու սկզբնական շրջանը գրավիչ և հետաքրքիր է թվում երիտասարդներին, սակայն այն զերծ չէ սթրեսային իրավիճակներից: Դպրոցում մասնագիտական ուսուցում անցնելիս և աշխատանքի վայրում, ինչպես նաև նոր սոցիալական հարաբերություններ սկսելիս նրանք ստիպված են հատուկ բնույթի դժվարություններ հաղթահարել: Երիտասարդական միգրացիոն ծառայություններն առաջարկում են անհատական խորհրդատվություն, ինտենսիվ աջակցություն և խմբային առաջարկներ, որոնք հարմարեցված են ձեր կոնկրետ խնդիրներին և հարցերին:

Ի թիվս այլ բաների՝ կգտնեք առաջարկներ հետևյալ թեմաներով՝

- Դպրոց և կրթական համակարգ
- Անհատական ուսուցում և մասնագիտական գործունեության ծրագրավորում (զբաղվածության տեղական գործակալությունների հետ համատեղ)
- Մասնակցություն սոցիալական, մշակութային և քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում
- Ուսուցման նոր տեխնիկական միջոցների ուսուցում, մասնավորապես՝ գերմաներեն լեզվի ուսուցման ծրագրեր

Առցանց խորհրդատվություն

Անհատական խորհրդատվությունից բացի դուք հնարավորություն ունեք ստանալու առցանց խորհրդատվություն երկու ծրագրի շրջանակում: «mbeon» առցանց խորհրդատվությունը և jmd4you խորհրդատվական հարթակը կօգնեն ձեզ ամենակարճ ժամկետներում ստանալ ձեր հարցերի պատասխանները:

mbeon զրուցարանում դուք կարող եք շուրջօրյա անհատական օգնություն և աջակցություն ստանալ, ինչպես նաև տալ ձեր հարցերը: Խորհրդատվությունը տրամադրվում է mbeon հավելվածի միջոցով՝ տարբեր լեզուներով: mbeon-ում կգտնեք ձեր լեզվով խոսող խորհրդատուների, որոնք պատրաստ են օգնել ձեզ:

- *www.mbeon.de*

Մինչև 27 տարեկան երիտասարդ ներգաղթյալները կարող են խորհրդատվություն ստանալ առցանց: Հարցերը կարելի է ուղղել ընդհանուր զրուցարանում կամ անձնական նամակով: Հարցերին պատասխանում են Երիտասարդական միգրացիոն ծառայության (JMD) փորձառու աշխատակիցները:

- Գերմաներեն՝ *www.jmd4you.de*, ինչպես նաև
- Անգլերեն՝ *www.your-way-in-germany.org*
- Ռուսերեն՝ *www.putjwgermaniju.org*
- Թուրքերեն՝ *www.almanyayolu.org*
- Արաբերեն՝ *www.bousaletuk-fi-almanya.org*
- Ալբաներեն՝ *www.udherrefyesi-gjermani.org*

Հարցրեք ընտանիքի անդամներին, ընկերներին, գործընկերներին, համադասարանցիներին, հարևաններին կամ ձեր սպորտային ակումբի անդամներին խորհրդատվություն ստանալու կոնկրետ հնարավորությունների մասին:

Գտե՛ք լրացուցիչ մանրամասն տեղեկություններ և օգտվեք անվճար խորհրդատվություններից:

Որտե՞ղ ստանալ լրացուցիչ տեղեկություններ խորհրդատվական ծառայությունների մասին՞

Խորհրդատվական կոնկրետ առաջարկների վերաբերյալ տեղեկություններ կարող եք ստանալ, օրինակ, ձեր տարածաշրջանի հետևյալ հաստատություններում.

- մունիցիպալ, քաղաքային կամ շրջանային կառավարման մարմիններ (Gemeinde- Stadt- oder Kreisverwaltungen),
- Կամավոր բարեգործական կազմակերպությունների գլխավոր միություններ (Աշխատավորների սոցիալական ապահովության կազմակերպություն (Arbeiterwohlfahrt), «Կարիտաս» գերմանական միավորում (Deutscher Caritasverband), «Դիակոնիա» սոցիալական օգնության և զարգացման գերմանական ավետարանական կազմակերպություն (Diakonie Deutschland-Evangelisches Werk für Diakonie und Entwicklung), Գերմանական Կարմիր խաչ (Deutsches Rotes Kreuz), Հավասարության և սոցիալական օգնության գերմանական կազմակերպություն (Deutscher Paritätischer Wohlfahrtsverband), Գերմանիայում հրեաների սոցիալական օգնության կենտրոն (Zentralwohlfahrtsstelle der Juden in Deutschland)),
- Վտարվածների միություն (Bund der Vertriebenen),
- Միջազգային միություն (Internationaler Bund),
- երիտասարդների հետ սոցիալական աշխատանքի կազմակերպություններ (Träger der Jugendsozialarbeit)
- ինտեգրման կուրսերի անցկացման կազմակերպություններ (Träger der Integrationskurse):

Առավել մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել համացանցում հետևյալ հղմամբ՝

- *www.bamf.de/DE/Themen/Integration/ZugewanderteTeilnehmende/BeratungErwachsene/beratung-erwachsene-node.html*
- *www.mbeon.de* և
- *www.facebook.com/mbeon.chat*
- *www.jugendmigrationsdienste.de*

Հրատարակման տվյալներ

Հրատարակիչ՝
Bundesamt für Migration und Flüchtlinge
90461 Nürnberg

Թարմացվել է՝
10/2020

Տպագրող՝
Silber Druck oHG, Lohfelden

Ձևավորումը՝
MediaCompany – Agentur für Kommunikatikon GmbH

Նկարազարդումը՝
istock/sturti, istock/lisegagne, istock/SDI Productions,
BAMF/Bildkraftwerk/Thomas Geiger

Պատվեր՝
Publikationsstelle des Bundesamtes für Migration und Flüchtlinge
www.bamf.de/publikationen

Այս հրապարակումը կարող եք ներբեռնել նաև որպես PDF փաստաթուղթ հետևյալ էջից՝ www.bamf.de/publikationen

Սույն հրատարակությունը թողարկվում է Ներգաղթյալների և փախստականների հարցերով դաշնային գերատեսչության կողմից՝ հասարակայնության հետ աշխատանքի շրջանակում: Հրատարակությունը տրամադրվում է անվճար և նախատեսված չէ վաճառքի համար:

Այցելեք մեր էջ հետևյալ հղումով՝
www.facebook.com/bamf.socialmedia
@BAMF_Dialog
www.bamf.de

Other Language ?
www.bamf.de/publikationen